

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԻԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ
ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԳԵՐՄԱՆՆԵՐՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ս. Վ. ԹԱՐԱՂՅԱՆ

Անհրաժեշտությունը դիալեկտիկական և քերականական կատեգորիա է: Բնության և հասարակության մեջ առկա երևույթները և տեղի ունեցող իրադարձությունները պատճառական պայմանավորվածության դրսևորումներ են, այսինքն՝ դրանց զարգացման հիմքում ընկած է օրինաչափորեն գործող անհրաժեշտությունը: Աշխարհում առանց պատճառի երևույթներ չկան: ամեն ինչ կատարվում է անհրաժեշտաբար, անխախտ ուժով, օբյեկտիվ օրինաչափությամբ: Անհրաժեշտությունը ճանաչման պետք է տեղի ունենա տվյալ պայմաններում¹, այն արտահայտում է երևույթների միայն էական կապերը, զարգացման միտումները: Դա երևույթների այնպիսի զարգացումն է, որն անխուսափելիորեն բխում է այդ երևույթների ներքին, էական հատկություններից, փոխհարաբերություններից²: Սակայն զարգացման ընթացքը երբեմն պայմանավորում են նաև պատահական, արտաքին հանգամանքները: Պատահականի հիմքը պետք է որոնել ոչ թե երևույթների զարգացման ներքին էություն, այլ արտաքին հանգամանքների պատահական ազդեցության մեջ: Այնուամենայնիվ, զարգացման ընթացքում պատահականությունը հաճախ կարող է վերածվել անհրաժեշտության և հանդես գալ ռոպես անհրաժեշտության դրսևորման ձև և որպես նրա լրացում³:

Անհրաժեշտության և պատահականության դիալեկտիկայի հաշվառումը կարևոր պայման է և՛ պրակտիկ, և՛ ստեղծագործական, և՛ գիտական գործունեության մեջ: Ակնհայտ է, որ լեզուն հաղորդակցության միջոց է: Հաղորդակցվելու ցանկությունը նախնադարյան մարդու համար պատճառ է դարձել, որ անհրաժեշտաբար առաջանար խոսելու, այսինքն՝ լեզվի միջոցով մտքերն արտահայտելու գործողությունը: Որպես ճանաչողական ու հաղորդակցական գործառնություններ իրականացնող նշանային համակարգ՝ լեզուն միաժամանակ մարդկային գործունեության կոորդինացման անհրաժեշտ միջոց է: Յուրաքանչյուր լեզու ունի անհրաժեշտության կատեգորիան արտահայտող քերականական և բառակազմական իր միջոցները: Գերմաներենում այդ կատեգորիան դրսևորվում է մոդալ (եղանակավորող) բայերի, եղանակավորող ստորոգելիական վերադիրների և մոդալ ֆուրմներին (եղանակավորող-առաջնորդողների) միջոցով:

Մոդալ բայերը, որպես անհրաժեշտության կատեգորիայի դրսևորման քերականական ձև, ունեն իրենց լեզվական առանձնահատկություններ՝ խոնարհման յուրահատուկ համակարգը: Դրանք անկանոն բայացանկի մեջ մտնող պրետերիտո-պրեզենտային բայեր են⁴: Վ. Ժիրմունսկին գրում է, որ մոդալ բայերի մեծ մասն առաջացել է մի շարք բայերի անցյալ (Präteritum կամ Imperfekt) և ներկա (Präsens) ժամանակների ձևերից⁵: Այսպես, wollen-ը (ուզենալ, կամենալ) առաջացել է wolte[welte]-ից, lassen-ը՝ lazen, lazu-ից:

Մոդալ բայերի երեք հիմնական ձևերը (անորոշ, անցյալ կատարյալ, քե-

1 Փիլիսոփայական բառարան, Մ. Մ. Ռոզենտալի խմբագրությամբ, Ե., 1975, էջ 76:

2 Ա. Կ. Սպիրկին, Մարքսիստական փիլիսոփայության դասընթաց, Ե., 1970, էջ 257:

3 Նույն տեղում, էջ 258:

4 Е. Крашениникова, Модальные глаголы в немецком языке, М., 1954, с. 3.

5 В. Жирмунский, История немецкого языка, М., 1948, с. 245.

րականական դերբայ՝ Infinitiv, Imperfekt, Partizip II) կազմվում են մեծ մասամբ թույլ խոնարհման բայերի* նման, օրինակ՝

Որոշ մոդալ բայեր (müssen, können, dürfen, mögen), որոնք անորոշում ունեն քմայնացում (ումլառում), անցյալ կատարյալում (Imperfekt/Präteritum) և Part. II-ում այն կորցնում են: Օրինակ՝

Können—konnte—gekonnt
mögen—mochte—gemocht
dürfen—durfte—gedurft
müssen—mußte—gemußt

Այս բոլոր բայերը, որպես կանոն, Präsens (ներկա) ժամանակի 1-ին և 3-րդ դեմքերում չունեն դիմային վերջավորություն, եզակին կազմում են արմատական ձայնավորի փոփոխությամբ (Ablaut): Ուժեղ խոնարհման բայերն իրենց անցյալ կատարյալը (Präteritum, Imperfekt) կազմում են ճիշտ այդպես, այստեղից էլ՝ մոդալ բայերի Präterito-Präsenta անվանումը:

Հաղորդակցության ընթացքում յուրաքանչյուր նոր միտք խոսքում (տվյալ դեպքում՝ քերականական հատուկ կառուցվածքներում) կարելի է համարել անհրաժեշտորեն ճշմարիտ, տրամաբանական և իմաստաբանական: Տեսնենք, թե դա ինչպես է արտահայտվում գերմաներենում: Իմաստաբանական անհրաժեշտության կարգը դրական (positiv) նախադասություններում արտահայտվում է müssen մոդալ բայի միջոցով: Օրինակ՝ Aschot muß nach Jerevan fahren. Աշոտը պետք է մեկնի Երևան: Իսկ ժխտական (negativ) նախադասություններում անհրաժեշտության կարգը կարող է արտահայտվել nicht können և nicht dürfen մոդալ բայերի միջոցով: Օրինակ՝ Aschot kann nicht nach Jerevan fahren. Աշոտը չի կարող մեկնել Երևան: Können-ը արտահայտում է ֆիզիկական և մտավոր կարողություն:

Վերը բերված օրինակներից հետևում է, որ՝ երբ գործ ունենք իմաստաբանական կարգի հետ, կիրառվում են sollen և müssen մոդալ բայերը: Sollen-ի դեպքում այն դիտվում է որպես ներքին համոզմունք, մղում, անհրաժեշտություն՝ որպես իրադրությունից բխող կարգադրություն, որի դեպքում պարտադիր չէ գործողության իրականացումը, մինչդեռ müssen-ի դեպքում անհրաժեշտությունը դիտվում է որպես անխուսափելիություն:

Գերմաներենում անհրաժեշտության իմաստաբանական-քերականական կարգը կարող է արտահայտվել haben+zu+Infinitiv խմբով: Օրինակ՝

Ich habe etwas zu machen.

Ես ինչ-որ բան ունեմ անելու:

Ich muß (soll) etwas machen.

Ես պետք է ինչ-որ բան անեմ:

կամ՝ Diese Arbeit ist zu machen.

Այս աշխատանքը պետք է կատարվի:

Անհրաժեշտության գաղափարը «sollen» մոդալ բայը ևս արտահայտում է նույն կերպ, սակայն այս մոդալ բայի կիրառման ժամանակ միշտ ենթադրվում է գործողության հեղինակի և մոդալության հեղինակի անհամապատասխանություն՝ UH≠UM**, օրինակ՝ Aschot soll Aram anrufen. Աշոտը պետք է Արամին զանգահարի: Müssen և sollen բայերի իմաստը ավելի է շեշտվում man-ով կազմված նախադասություններում, հավանաբար այն պատճառով, որ չկա կոնկրետ գործող անձը, այլ շեշտվում է կատարվելիք գործողությունը՝ որպես անհրաժեշտություն: Օրինակ՝ Man muß das Problem der Luftverschmutzung lösen. Պետք է լուծվի օդի մաքրության հիմնահարցը:

* Թույլ խոնարհման բայերի անցյալ կատարյալը (Imperfekt) կազմվում է -(e) te վերջածանցով, իսկ քերականական դերբայը (Partizip II)՝ ge նախածանցով և -(e)t վերջածանցի օգնությամբ:

** Բանաձևում U-ն հեղինակն է, H-ը՝ գործողությունը, իսկ M-ը՝ մոդալությունը:

Անհրաժեշտության գաղափարը կարելի է արտահայտել եղանակավորող բայերի և բայի անորոշ պասիվ (InfinitivPassiv) ձևի միացությամբ: Այս կառուցվածքը հանդիպում է գերմաներենի՝ ենթակա չպահանջող բայերի մեջ, օրինակ՝ Es muß auch in Zelten geschlafen werden. Պետք է որ վրաններում քնած լինեք: Անհրաժեշտության դրսևորման քերականական միջոց են համարվում նաև գործողության առարկա (խնդրառություն չունեցող) չպահանջող նախադասությունները: Օրինակ՝ Es muß das Problem der Luftverschmutzung gelöst werden. Պետք է լուծվի օդի մաքրության հիմնախնդիրը:

Գերմաներենում անհրաժեշտության կատեգորիան կարող է արտահայտվել նաև sein+zu+Infinitiv կառուցվածքով: Այս ձևը երկիմաստ է. իմաստը որոշվում է կոնտեքստից՝ բառային նեղ իմաստի միջոցով: Այս կառուցվածքը կիրառվում է միայն այն բայերի հետ, որոնք, մոդալությունը արտահայտելու դեպքում, իմաստային նկարագրություն ունեն, այսինքն՝ նախադասությանը տալիս են քերականական իմաստ, ինչպես՝ Von hier ist dir zu sehen. Այստեղից ես դու լավ երևում:

Մոդալ ստորոգելիական վերադիրները ևս միջոց են անհրաժեշտության գաղափարի դրսևորման համար: Դրանք են՝ nötig, notwendig, օրինակ՝ Es ist nötig, diese Aufgabe noch in diesem Jahr zu erfüllen. Այս հանձնարարությունը անհրաժեշտ է դեռ այս տարվա մեջ կատարել:

Sollen մոդալ բայը հաճախ է հանդես գալիս Infinitiv II-ի հետ. այս դեպքում ուրիշի գործողության անհրաժեշտությունը, ուրիշի կարծիքը արտահայտվում են անուղղակի խոսքի միջոցով: Օրինակ՝ Übrigens soll er sich ganz heiter bekommen haben. in Danzig⁶. Ի դեպ, ասում են, որ նա բավականին ուրախ ժամանակ է անցկացրել Դանցիգում:

Müssen մոդալ բայը նաև օգտագործվում է Infinitiv II-ի հետ, ինչպես՝ Er hat eine inhaltsreiche Vorlesung gehalten, er muß viel daran geübt haben. Նա մի իմաստալի դասախոսություն կարդաց: Նա պետք է որ շատ աշխատած լինի: Na, das muß kommissch angesehen haben. Այո, երևի դա շատ ծիծաղելի տեսք է ունեցել:

Sollen բայը կարող է արտահայտել նաև անհրաժեշտությունից բխած հրաման, խնդրանք, ծրր müssen բայը անհրաժեշտության դեպքում ժխտում է թույլտվությունը, ապա իր նշանակությամբ մոտենում է brauchen-ին, օրինակ՝ Sie müssen sich nicht operieren lassen. Դուք չպետք է թույլ տաք Ձեզ վիրահատել: Sollen բայի մյուս նշանակությունը կանխագուշակումն է կամ ենթադրությունը, որտեղ իշխում է անհրաժեշտությունից բխած հավանականության մեծ ուժը: Օրինակ՝ Der Zud soll (muß) bald kommen.

Պետք է որ գնացքը շուտով գա: Ինչպես երևում է այս օրինակներից, müssen և sollen բայերը կարող են ըստ իմաստի իրար փոխարինել: Սակայն, ի տարբերություն müssen բայի, sollen-ը արտահայտում է ուրիշի խոսքի վրա հիմնված ենթադրություն, իսկ müssen-ը՝ ենթադրություն՝ ինչ-որ օբյեկտիվ կանխանշանների իմացության հիմքով: Այս նշանակությամբ müssen մոդալ բայը կարող է կիրառվել և Inf. I-ի և Inf. II-ի հետ: Վերջիններիս մեջ կա ոչ թե եղանակային, այլ ժամանակային տարբերություն, օրինակ՝ Er muß es noch nicht wissen, sonst hätte er mir's gesagt (I. I). Նա չպետք է որ այդ իմացած լիներ, հակառակ դեպքում ինձ կասեր այդ մասին: Sie müssen damals sehr müde gewesen sein (Inf. II). Պետք է որ բավականին երջանիկ հոգնած լինեիք: Wie glücklich sie sein muß. Պետք է որ բավականին երջանիկ լինի նա:

Müssen+Infinitiv կառուցվածքը կարող է հանդես գալ որպես պարզապես բայ՝ մոդալությունը որևէ լիիմաստ բայի միջոցով թարգմանելով, ինչպես՝ Grünlich war seit diesem Tage mürrisch,... ja unaus stehlich, das muß ich sagen!⁷

⁷ Նույն տեղում, էջ 202:

Գրունդը իր շրջանից փնթփնթան էր դարձել, ...այո՛, ես կասեի՝ անհանդուրժելի:

Այսպիսով, կարելի է հանգել այն եզրակացության, որ անհրաժեշտության դիալեկտիկական կատեգորիան, ինչ խոսք, լեզվում չէր կարող շունենալ դրսեվորման քերականական միջոցներ, որոնք այդքան բազմաթիվ է բազմազան են:

СРЕДСТВА ВЫРАЖЕНИЯ ДИАЛЕКТИЧЕСКОЙ КАТЕГОРИИ НЕОБХОДИМОСТИ В ГРАММАТИКЕ НЕМЕЦКОГО ЯЗЫКА

С. В. ТАБАГЯН

Резюме

Необходимость—диалектическая грамматическая категория. Любой язык имеет свои грамматические и словообразовательные средства, выражающие категорию необходимости. В немецком языке эта категория выражается посредством модальных глаголов, модальных предикатных слов и модальных фюрунгов. Модальные глаголы как грамматические формы выражения категории необходимости имеют свои языковые особенности, особую систему спряжения. В немецком языке диалектическая категория необходимости более ярко выражается посредством модальных глаголов «müssen» и «sollen».